



Յ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Մ. ՍՈՒՂՈՒՆՅԱՆ

Ժ.Ա.Գ Տարի, Թիւ 9

Յ Ա Ր Ա Թ

5 Սեպտեմբեր, 1898

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագինն է՝ **Տարեկան՝** Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դան. : **Վեցամսեայ** Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դան. : **Հասը 30 փարսյ :** Բաժանորդագրութիւնը քիւի վրայ է, տարեկան բաժանորդները պիտի ստանան **52** եւ վեցամսեայները՝ **26** քիւ Ծաղիկ :

Հանրոցոս նիւթերու վերաբերեալ յօդուածներ եւ քրքակցութիւններ շնորհակալութեամբ կ'ընդունուին :

Ծաղիկի ընկալագրերը **Պաղտատեան Դրաստն** կնիքը կը կրեն **ՀԱՍՅԷ.** — Ծաղիկի վերաբերեալ ստէն ինչ պէ՛տէ եւ ուղղել **Պաղտատեան Դրաստն**ը, կ. Պոլիս, Սուրբան Համալ, քիւ 14 :

ՎԱՌԱՐԱՆԻՆ ՔՈՎԻԿԸ

ՍԻՐՈՎ ԹԷ ՀԱՇՈՒԻՈՎ
(Եզրակացութենէն ետք)

Տգեղ սեռին պատկանելու դժբաղդութիւնը ունենալով հազերձ, առանց ասպետական ոգիին եւ ուղղամտութեան դէմ մեղանշած ըլլալու, չենք կըրնար ուրանալ որ մեր գեղեցիկ աստիճաններուն մէջ ամէնուն տրուած չէ, եւ ներելի ալ չէ, Սիւպիլ մը ըլլալ. սակայն թէ շնորհալի Սիւպիլի մը ներելի՞ է արդեօք իր գեղանի ու տգեղ քոյրերը ամէնը մէկ ջրով լուանալ եւ ոչ ցեղակից համասեռներու դասակարգութեան մէջ, միմիայն Քայլ ժիւթոններով եւ ռէյնիէ ձեռնոցներով որակել, յատկանիշել զանոնք :

Այս տողերը գրելու ատենս, զրասեղանիս վերայ լեցուն են զանազան մեծութեամբ թղթիկներ, անուշահոտ բուրումնաւէտ՝ միւսի միւսի գրերով տողանցուած, ասոնք ամէնն ալ առանց բացառութեան, բարկացող հրեշտակներու շեշտերով եւ շառագնտ աշտերու հուրքերով՝ ուղղակի կամ անուղղակի բողբոջներ են Սիւպիլի գործած անիրաւութեան դէմ, գէ՛թ, քացառութիւնները յարգե՞լ ալ չի կայ :

Ազնուափայլ, նազելաշուք Թղթակիցներս իրաւամբ դիտել կ'ուտան թէ ինչո՞ւ եւ ո՞ր իրաւամբ այդ կարգի անողոք դատավճիռ մը ընդունին իրենք,

երբ Սիւպիլի մը քմահաճոյքը յանկարծ փիլիսոփայելու կ'ելլէ եւ մաս մը Տգեղ կարճամիտներ այդքան ձախող փաստաբանութիւն մը կ'ունենան :

Իմ շնորհափայլ Թղթակիցներս իրաւունք ունին :

Արդարեւ ո՞ր օրէնքին մէջ տեսնուած է երբեք որ երկու դատախազներու համար տրուելիք վճիռը օրին մէկն ալ հագնի երրորդ մը որ գործին մէջ ոչ դեր ունի, ոչ մասնակցութիւն. ո՞ր ատեն պատահեր է որ քննութիւն մը այս ինչերը տան եւ ապագայ բարենիշը կամ յոռենիշերը այն ինչերը ստանան, գէ՛թ սա մեր Քննիչ Յանձնաժողովէ՞ն ալ օրինակ առնել չիկայ, տեսէ՛ք, անիկա ի՞նչ արդարութեամբ իր մրցանակները եւ վկայագրերը կը բաժնէ տարուէ տարի :

Հայ գեղեցիկ սեռին փափկասուն ներկայացուցիչները՝ զգայուն բողոքարկուներ, բնաւ չեն ընդունիր Սիւպիլին իրենց վերագրած ցուցանալորքիւնը եւ նիւթապաշտօնիւնը, կը ցաւին որ Սիւպիլ պահ մը մոռնալով որ ինք ալ կին մըն է եւ կիներուն պատուականագոյնը, կ'ելլէ, այդպէս հապճեպ որոշումով մը իրենցները գետնէ գետին կը զարնէ եւ արեւելչիկն ու արեւմտսփիկն մէջտեղ ժիւթոններով մերկապարանոց կը պարզէ :

Եւ կ'աւելցնեն.

« Հայ կինը դերեւս ուսումնասիրելու պէտք ունի Սիւպիլ, որովհետեւ ցարդ ուսումնասիրածները հակառակներն են միայն : »

« Բուն հայուհին, ճշմարիտ Հայ կինը կը մրցի Իտալուհիներուն հետ նախընտրելով իր սիրածին հետ ամուսնանալ, քուրջեր հագնիլ եւ խրճիթի մէջ բնակիլ : »

« Կը գերազանցէ Ամերիկուհիները, առանց հաշուի ամուսնանալով (հողեւրճայի՞ն հաշիւները հաշիւ բառին անձուկ ասմանին մէջ չեն կրնար պարունակուիլ) իր սիրածին հետ եւ իր աշխատութեամբը ու գոհողութիւններով յաղթելով բոլոր զբուռութիւններու : »

« Կը հասկնայ Անգլուհիին « սիրով պիտի 'ամուսնանար »ը, միայն թէ կը մերժէ վերջին « սակայն »ը որ Սաքսոններու պաղարիւնութեան յատուկ բաժինն ըլլալու է անշուշտ : »

« Բնու չըմբռներ ու ծիծաղելի կը գտնէ Ֆրանսացի կնոջ առ ի չգոյ՛է դրամի « պատուհանէն փախչող » սէրը, ինչպէս Տալիակ կը գտնէ Ֆրանսացի օրիորդին ամէն ճեղ զՏաժ սէրը . . . »

« Կը ժպտի Գերմանացի մամիկին, բարի պառաւ մը, որուն խելքը վերջապէս գլուխն է եկեր անշուշտ երկու անգամ ամուսնանալէն ետքը . . . »

« Իսկ Յոյն կիներուն եւ օրիորդներուն « ամէն կերպով գոհացնէ »ը չի հասկնար, որովհետեւ աշակերտէ գ համեմերէն ոչ կը հասկնայ, ոչ ալ կ'ախորժի : »

Ազնի'ւ Սիպիլ, Հայ կիները մէկ խօսքով ըսել կ'ուզեն թէ, ՍԻՐԵԼՈՒՆ ՄԷՉ ՀՈՇԻԻ ԶԸԼԼԱՐ եւ ՀՈՇԻԻՆ ՄԷՉ ՍԷՐ ԶԸԼԼԱՐ :

Ի՛նչ մեղքս պահեմ, ես ալ սա անուշաբոյր թղթիկներուն դատը պաշտպանելուս մէջ մասնաւոր հաճոյք մը կ'զգամ եւ նա վառվռուն աչքերուն արտայայտութիւնը ամենէն պերճախօսը եւ ամենէն ճշմարիտը կ'ընդունիմ :

Իմ կարծի՞քս. — Ներեցէք որ չպահեցի :

Ս.

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

Մ. Նահանգներուն նախագահն իր տարեթոշակն ամսական մասնավճարով կ'ստանայ. ամէն ամսու 26 ին երկրին գանձապետը 4166 սուլարի չէք մը Սպիտակ Տունը (նախագահին բնակարանը) կը խրկէ :

— Աշխարհիս կայսրութիւններու մէջ միայն Աւստրիան է որ ոչ գաղթականութիւն մը եւ ոչ ալ անդրծովեան կալուած մը ունեցած է :

— Բարիզի բնակիչներուն միայն 12 էն մէկ հասն օտարազգի է :

— Պերլինի բնակիչներուն միայն 100 ին 37 ը բնիկ

Գերմաններ են, միւսներն ամէն տեսակ օտարազգիներ են : Այդ մայրաքաղաքին մէջ թիչկներուն կառքերն ուրիշներէ առաջ անցնելու արտօնուած են :

— Լոնտոնի մէջ ամէն գիշեր 6000 չուեւորներ դուրսը՝ բաց օդին՝ կը քնանան, իւրաքանչիւր շարժում մէջ ալ երկու անձ անօթութիւնէ կը մեռնին :

— Երուսաղէմ 60,000 բնակիչ ունի. այս բազմամարդութիւնը քսան տարի առաջուան գրեթէ կրկինն է, բայց քաղաքին ջուրի մատակարարութիւնը գէշ եւ անկանոն է :

— Անգլիոյ Թէյմզ գետէն (որուն եզերքը Լոնտոնի նաւահանգիստը կը գտնուի), օրական 500 նաւեր կը մեկնին աշխարհիս ամէն մասերուն համար :

— Բարիզցին թատրոնին մէջ կը սուլէ՝ իր դժգոհութիւնը յայտնելու, բնդհակառակն Լոնտոնցին իր ուրախութիւնն եւ գոհ մնալը ցուցնելու համար :

— Բարիզի մէջ 26800էն աւելի Գերմանացիներ կան մինչդեռ Պերլինի մէջ Ֆրանսացիներու թիւն է 400 էն 500 :

— Լոնտոնի դարեջրատուններու մէջ 100 հազարէն աւելի սպասարկու օրիորդներ կան, տարիքին 20—35, ասոնցմէ 400էն աւելին կղերականներու քայրեր, դուստրներ, քրոջ կամ եղբոր աղջիկներ են :

— Պաւերայի Նիւրեմպերկ քաղաքին մէջ 1080 թուականին շինուած տուներ տակաւին կանգուն կը գտնուին :

— Երկրագունտիս ցամաքային մակերեսին մէկ երրորդն անտառներով ծածկուած է :

— Ամբողջ Ֆրանսայի մէջ 2150ի չափ կին հեղինակներ կան. ասոնցմէ 1000ը վիպագիր, 200ը բանաստեղծ, 150 ը կրթական նիւթեր գրող, մնացածներն ալ զանազան նիւթերու վրայ գրողներ են :

— Աւստրիոյ եւ Գերմանիոյ մէջ 160 ի չափ խոհարարութեան դպրոցներ կան. առաջնակարգ հիւրանոցներու խոհարարապետն այն դպրոցներուն մէկէն վկայական մը ունենալու է :

(Ինչզանդիտն)

Ե Ա Վ Ա Շ Ե Ա Վ Ա Շ

— Յակարիկ ազա պանտ գալըրսա պիր սահաթ է վզէլ գըլըք քէօմիւրիւմիւզիւ ալալըմ, եարըն օ պիր կիւն քէօյաէն էնէրսէք պիր տաղտաղա տա օ օլմասըն :

— Ալըրըզ ճանըմ աճէլէն նէ՞ տիր, եավաչ եավաչ :

— Պագ ունուտաճայըրմ սալօնըն խալըսը սէլիք սէլիք օլտու, պաչկա պիր թանէ ալալըն :

— Ալըրըզ, եավաչ եավաչ :

— Աման ունութմատա պու կիւն պիր թօի ֆանէլա սլ, չօճուզլարըն ֆանէլալարը բէք էսկիմիչ, հազըր ալըբօրսան բէք պահալը օլուեօր :

— Շիմտի օնուն վագթը՞ մը ես, հէլլէթտէ ալաճաղըզ, եավաչ եավաչ :

— Հա պագ ունուտաճաղըրմ, Ֆիլօ օլլա Բուբուլուն այլըզլարընը իսթէմիչէր իտի գօլէճաէն :

— Վէրիբիզ, եավաչ եավաչ :

— Քա ծնւար Փրքնիկ տիր , ետվաչտան աղնարւա՞ր , այլն պիրի տէր տէ՛մէզ այլըզ իստէրլէր :

— Վարորնւար իստէսինլէր , ետվաչ ետվաչ :

— Օ տէյիլ ամա , պիզ քէօյտէն նէ՞ զէման էնէ՛՝ ճէյիզ :

— Հէլպէթ վազթը կէլիրսէ էնէրիզ , ետվաչ ետվաչ :

— Էյի ամա , ետվաչ ետվաչ զըչ կէլտի :

— Կէլիրսէ նէ օլուր , աճէլէմիզ եօզ ետվաչ ետվաչ :

— Մեղայ , պու կիւն պիր ետվաչ ետվաչ տըր թութտուրմուչ կիրտիօրսըն :

— Զիւնքի ալլըմա սօզու՛նաճազ ետվաչ ետվաչ տա օնու՛ն իչիւն :

— Մեղայ Յիսուսու՛մ , Ալլահա շիւքիւր , չըտըրաճազ նէ՞ վար :

— Ալլահա էմանէթ էօնիւմիւրլուքի հաֆթա Խաչ , ալ բըրթընը իչէրի գաչ տէրլէր , իստէր իստէ՛մէզ քէօյտէն էնէճէյիզ :

— Հէլպէթտէ էնէճէյիզ , զըչըն պուրատա գալաճազըզ զահէր :

— Էյի ամա , գատապ , էթմէքճի , զարգավաթճը , կէօչիւ պրագմազար քի էնէիմ :

— Վուչ փէք թօճաֆսըն , Ակորիկ աղա , փարալաբընը եէյէճէք տէյիլսին եա , ետվաչ ետվաչ վէրիրսին :

— Կէօչիւ շու՛նտան շուրայա պրագմազար :

— Նէ հատսինէ , պու՛նլար գօմիսիօն չալուչու տըր զահէր :

— Քեաչքի գօմիսիօն չալուչու օյա ըտըլար , էյէր չէօփ փարաթը պօրճու՛ն վար ըսա վէրիրսին , եօզա պիր կէօչ թէզքէրէսի ալըրսըն պիթէր կիրտէր :

— Էյ պու՛նլար նէ ետփար քի :

— Նէ ետփաճազար , էկէր իարայը վէրմէզսէն կէօչիւ պրագմազար , հէմ տէ իչգալէթ չըզարըլար :

— Էյ արթըզ պիւմէմ , սէն պանա սէզօն իչիւն պիր ֆիսթանըզ իլէ պիր չիֆթ պօթին ալ տէ , նէ ետփարսան ետի :

— Պագալ գատապը նա՞սըլ էտէիմ :

— Հէր վազըթ նասըլ էտէրտէն կէնէ էօյլէ ետի . . . էօ՞ֆ . . . մէրաղըմ չըգտը . ազըն պիր եօզա այլը՛մըչ նէ քի տէրսէ՛մ եօզ տէր , պու տա եէնի ատէտ օլտու զահէր :

— Եէնի տէյիլ , էսկիտէն տիր ամա տիչիմի սըզըպ աման ալէմէ կիւլիւնճ օլմայալըմ տէյօրսու՛մ , չիմտի արթըզ կիւվէնէճէք տալ գալմատը :

— Օ քի պէօյլէ տարտայըտըն ըսա նէյէ՞ կէլտիք , Պէյօլլու՛նտա եէրիմիզտէ օթուրայըտըք :

— Սանա պին տէֆա սէօյլէտիմ պէնի տիյնէմէտին :

— Քա զահէր պէն սէպէպ օլտու՛մ քէօյլէ չըգմայա :

— Եա քի՞մ սէպէպ օլտու , մինպահաթ Պէյօլլու՛նտա օթուրմամ տէյիւ աչազ պատան քի՞մ իտի , պաչըմա օ գատար իչէր ետփարն քի պէն տէ միճպուր օլտու՛մ էվ թու թմտիա :

— Էյի եա , ֆէնա՞ մը օլտու , զայիֆլանմըչ , կիւն կիւնէ էրիյօրըտըն , պագ քէօյլէ կէլէլի նէ գատար իւսթէ գօյտու՛ն :

— Իւսթէ գօյտու ամա վիւճուտիմ տէյիլ , պօրճաբըմ իւսթէ գօյտու , հասըլը էկէր սէն պանա եար օլսան ըտը պիզ պու հալէ կէլմէզ իտիք :

— Ս.ման Ակորիկ աղա , չօճուգճա լազըրտըլար տիյնէյէմէմ , չիմտի եարըն Յուսէփ աղալարլէ ճըրճըր սու՛յունա կիրտիլէճէք , պէրապէր կէլթիսին , եօզա իչին վար էնէճէքսին :

— Եօզ էնմէյէճէյիմ , պէն տէ կէլիրիմ , եէյէլիմ իչէլիմ , ճիւմպիւլէ էտէլիմ , գատընլար էլպէթ պիր շէյ պիլլիլէր , հիչ պիր շէյ վազիֆէլէրինտէ տէյիլ :

— Ս.ման նէ գատար օլսա Ակորիկ աղա , էրքէք զըսմը իչինէ կիւճիւնէ մուգայէա օլմալը :

— Պօչ լազըրտը էֆէնալիմ , զէվգինէ ճիւմպիւլչինէ պագմալը , արթըզ պու՛նտան սօնրա պիր ազ տա պէն էլլէնճլմէ պագաճազըմ :

— Էվէ քի՞մ պագաճազ :

— Պու գատար վազըթ պէն պագտըմ պիր ազ տա սէն պագ :

— Քա պէն էրքէլիմ զահէր :

— Նէ ետփայըմ պիր ազ տա սէն տիւչիւնմէյէ պաչլա :

— Գատապ էթմէքճի փարա իսթէրսէ , նէ՛րտէն վէրէյիմ :

— Ետվաչ ետվաչ սէօյլէ :

— Ետվաչ ետվաչ տիյնէրլէր զահէր :

— Փէք սէօյլէ :

— Քա ճանըմ սանա պու կիւն նէ օլմուչ , տիւմանէճէ լազըրտըլար էտէյօրսըն :

— Հէլպէթ , պիր ատամըն գարչըսընա լազըրտը աննամազ պիրի չըգարսա նէ՞ օլուր , իչթէ պէօյլէ տիւմանէ օլուր , սանա պին քէրրէ տէտիմ քի , իչէրիմ տուրկու՛ն տուր , արթիլէ մէսարիֆլէր էտէճէք վազըթ տէյիլ , պէնիմ լազըրտըլարըմ սանա սու սէսի կէլիյօր :


— Օ քի պու տէրէճէ տարտայըտան , նէ ետփայըմ , նալլէթ օլսու՛ն նէ ֆիսթան իսթէրիմ նէ պօթին , սէն ըահաթ օլմատըգտան սօնրա պէն զահէր տուրուպ քէֆ էտէճէյիմ :

— Պէն քէնտի ըահաթըլըմը տիւչիւնմէմ , իլէրուտէ չօլուգ չօճուղու՛մուզ ըահաթ էթսին , չալըչաղըմ պու :

— Ախ Ակորիկ աղա , պէնի ֆէնա թապիաթըլը պիր գատըն սանմա , եիւզէ չըգմըչ պիր չօճուգ եէրինէ գօյ , զիրա չիմտիլէ գատար հէր իսթէտիքիլէրիմի ետփարն , պէնի պէօյլէ ալըչարտըն , օ քի վազթըն եօզ իսէ պու կիւնտէն էգօնօմիլի էլէ ալըրըզ , ինչալլահ իլէրուտէ իչինէ պիր քիար աչըզըլը կէլիր պու սըզընթըտան գուրթուրսու՛ն :

— Թէչէքքիւր էտէրիմ , պէնիմ սէվկիւլիւ էչիմ , հազըլսըն , սէնի պօչ մէսարիֆլէրէ ալըչտըրան պէն օլտու՛մ , հէր նէ տէտին իսէ ետփարըմ , չիմտի տէ քէնտի թէչվիլիմտէն թէչէքքի իթմէքտէյիմ ըսելով էրիկ կնիկ իրարմէ ներողութիւն խնդրել սկսան :

Ծաղիկ շատ անգամներ ըսած է ու կ'ըսէ , կանանց չափազանց ծախքեր ընելուն բուն պատճառը էրիկ մարդիկ եղած են :



ՆԿԱՐՆԵՐ

- Միւսիւ Քօզմի պիր իշէ եափըչա պիւտինի՞զ մի :
- Խայր տահա պիր իշ ույտուրամատըզ :
- Չօզ թօհաֆ չէյ , Ֆրանսըզճան իլէրտէ , փօլիթի-
գան եէրինտէ օլտուղու հալտէ շիմտիյէ գատար պօշ
կէզմէնիզէ թէհաճիւզ էտիյօրըմ :
- Շիմտիքի վագըթտա կէօզիւնիւ գափա Ֆրանս-
սըզճա պիլէն թութ , օ տա փարա էթմէզ :
- Պիր պանգայա կիրմէնին եօլունա պագմալը :
- Պանգալարըն տա քէնտի եէրլի կիւրլիւ ատամ-
լարը վար , տիշարտան ատամա ի՞թիյաճլարը եօզ :
- Շըմէնտըֆէրլէրէ տէյէճէյին եօզ եա :
- Ատամ սէն տէ , չըմէնտըֆէրլէր տէ պին զահմէթ
վէ էզիյէթլէ այտա 100 Ֆրանգա կէճէյի կիւնտիւզլիւ
պիր իշ պուլույօրսըն պիր այլըղը թամամ ալմաղա զըս-
մէթ օլմայօր , քէնտի արալարընտա պիր մարաղա չըզա-
րըյօրլար , սանա տա սէֆա կէլտին տէյօրլար :
- Պիր զէնկին գալընճա թիւճճար եախօտ պիր չօր-
պաճը պուլմայօրմըսըն :
- Հա՞նի օ թիւճճարլար , չիմտիքիլէր քէնտիլէրի իշ
արայօրլար , օ տէտիյին չօրպաճըլար հէփսի սուլունու
չէքտի լափա օլտու :

- Քօմիսիօն խանին մէջ .
- Պարոն Թորոս սա մեր հաշիւը չի տեսնա՞ս նայինք :
- Շատ աղէկ Մաթիկ աղա ,
- Բայց աղէկ նայելու է ,
- Հապա , հիմա հրամանքնիդ 100 ոսկի չի բերիք
հոս :
- Հրամանք ես :
- Աս 100 ոսկիին 50 ը սինեօր Կոստանդիին իստի-
լանց տուիր ու գնաց , 25 ոսկի ալ 2000 հատ բաց ծա-
խեր էիր , անոր Փարիս տուինք , ան ալ գնաց , 21 ոսկի
ալ տուպլէնեբրուն տուինք ան ալ գնաց , եղաւ ամէնը
96 ոսկի , 4 ոսկի ալ մեզի վալթաճիի Փախի կ'ընէ 100 ,
եւ հիմայ ամէն բերած ստակը լմնցաւ գնաց : Սըֆըռա
սըֆըռ էլտէ հիշ :
- Մաթիկ աղան այս հաշիւը աննելուն պէս Քօնսօլիտ-
հանէէն կծիկը դրաւ :

- Ճանըմ հայրիկ , քեզի բան մը պիտի հարցնեմ չիտակ
ըսէ :
- Ի՞նչ է տղաս , հարցուր նայիմ :
- Քուկին զէնաաթղ քօնսօլիտճի չէ՞ :
- Հա օղլում , ինչո՞ւ հարցուցիր :
- Էյ ո՞ր խանն ես :
- Ի՞նչ պիտի ընես ծօ :
- Քուղում հայրիկ , ըսէ :
- Կալաթա Քօմիսիօն խանը , ի՞նչ կայ որ :
- Երէկ զպրօցը զազէթա մը կար , տղաքները կար-
դացին , մէջը զրեր է քի Քօմիսիօն խանի քօնսօլիտճի-
ները բիացային իյնալը լսելուն պէս փախեր են , որ

- մէկն ալ խենդեցեր է , վախցայ քի դուն ալ խելքդ կը
կորսնցունես :
- Չէ օղլում , ան պաշխա պան է , շատ զարար ը-
րեր է տէ անոր համար :
- Էյ հապա դուն ալ խելքդ կորսնցունես նէ :
- Կորիր սըկէ , դպրատուն կ'երթաք ատանկ բանե՞ր
սովրելու համար :
- Չէ հայրիկ , մի սրգողիր , չիտակ ըսէ :
- Օղլում , ան խելքը կորսնցունողը բարա ունի ե-
ղեր տէ զարար ըրեր է անոր համար , ես այնչափ փարա
չունիմ որ զարար ընեմ :
- Էյ անանկ է նէ հոգս չէ , աղէկ որ չունիս եղեր :

ԿԱԿՈՍ

ԴԱՐԱՎԵՐՁԻԿ ԲԱՌԱՐԱՆ

- Զգայնիկ . — Հանրագիտակի մէջ տունկ մ'է , իսկ
Լոյսի մէջ սիրահար մը :
- Զգուշաւոր . — Արեւելքի յօղուածները :
- Զուտ . — Մեր հորին ջուրը :
- Զոքանջ . — Փեսային էրիկը :
- Զտիչ . — Գործիք մը որ հեղուկները կը զատէ (Արդ-
եօք սա Բագմավէպի լեզուն ալ չի՞ կրնար զտել) :
- Ընթերցող . — Կարդացող : Շատ տեսակ ընթերցող
կայ . վճարող ընթերցող , ձրի ընթերցող (մեծ մասը) ,
կարդացածը բնաւ չհասկցող ընթերցող , կարդացածը
սխալ հասկցող ընթերցող (այս ամենէն գէշն է) , կարդա-
լու ատենին քուններնին եկող ընթերցող (այս կարգէն
են Պատկերի եւ Մէճմուլայի ընթերցողները) , ջուրը փը-
չելով խմող ընթերցողներ (Աւետարեբի ընթերցողները) ,
եւ այլն եւ այլն :
- Ընթրիք . — Կոշտ բառ , հիմայ այս բառին տեղ ու-
րիչ նազիֆ բառ մը կայ , որ է սուփե :
- Ընտիր . — Այն վաճառքը զոր լրագիրները կը ծանու-
ցանեն , օրինակի համար Իսաղուլեանի թէյերը . . . () :
- Թախուր . Տաճկ . հափիփ . բաներ կան որոնց թիթ-
ուր կը փնտռուի , բառեր ալ կան որոնց թիթուր յարգ
չունի . Օրինակի համար ձմերուկը թեթեւ ըլլալու է իսկ
մարդը ծանր . քսակը որչափ ծանր ըլլայ այնքան աղէկ է .
սիրահարներուն թեթեւը յարգի է . իսկ ամուսնացեալ-
ներունը ծանր :
- Թել . — Խօսքը չգիտցող մարդու մը համար բառե-
րը իրարու հետ թելով չեն կրնար կապուիլ , ուստի հա-
շարով կապելու է :
- Թուղթ . — Եթէ երբէք Եւրոպա մեզի հետ չի կրնար
մրցիլ թուղթի սպառումին մէջ , պատճառը այն է որ
անիկա իր գրքերուն եւ լրագիրներուն կ'սպառէ թուղ-
թը մինչդեռ մենք մեր . . . սիկարներուն :
- Թմրեցուցիչ . — Մ . Սրբազանին քարոզները :

ԹԻԹԵՆԻԿ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բերա Լիւքսէնպուրկ զբոսարանին գաւաթ մը օղին 2 զրուշ ըլլայ նէ՛ մարդ մը քանի զրուշ տալու է որ քիչ մը գլուխը տաքնայ :

* * *

Ճերմակ կին մը աւելի ճերմկնալու համար տուփ մը բուտրա երեսը քսելու ըլլայ նէ հապա Խաճե՛ր կին մը քանի՞ տուփ քսելու է որ ճերմկնայ :

* * *

Տաներկու տարեկան տղաքները հիմակուրնէ շաբաթը երկու անգամ ամիսը երկու ըլլան նէ հապա 20—30 տարեկան ըլլան նէ օրը քանի՞ անգամ ամիսը երկու են :

* * *

Դասատու մը 250 զուրուշ ամսական կաննէ, երեք ամիս է որ ստակ մը առած չէ, ի՞նչ ուտելու է որ ապրի :

(Մեր Ազգոսէին առջեւ զրինք այս խնդիրը որ լուծէ, ի՞նչ ըսէ աղէկ, — Ինչ որ կենդանիները կուտեն :

* * *

Հաշիւ եղած է որ հիմակուան հասած աղջիկներէն երկուքը երբ իրարու քով գալու ըլլան մէկ ժամուան մէջ երկու խոշոր հատոր լեցնելու չափ խօսք կ'ընեն, այս հաշուով առոնք պառաւնալու ըլլան նէ քանի՞ հատոր լեցնելու չափ խօսք պիտի ընեն մէկ ժամուան մէջ :

* * *

Գտնելու է անանկ թիւ մը որ վիճակագրութեանց մէջ էն խոշոր գումարը կազմէ :

— Անկուտիներուն թիւը :



ԻՆՔՆԱՀԱՒԱՆ ՊԱՐՈՆ ՄԸ

Տիկին Մ. ի գուր ջանացեր էր համոզել իր երիտասարդ որդին, մերժելու համար այն օրիորդը, որուն սիրահարուած էր, որովհետեւ օրիորդը թէեւ դէմքով գեղեցիկ, բայց բնաւորութեամբ անտանելի տղեղ մ'էր :

Տիկին Մ. բարեկամներու միջոցաւ ալ վերջին ճիգ մ'ըրեր էր իր դաւակը յորդորելու, բայց ան ամենեւին ուշ չգնելով, կնոջս հետ՝ ոչ թէ մայրս, այլ ես պիտի պսակուիմ ըսելով, կ'ամուսնանայ նոյն օրիորդին հետ :

Հարսը որ արդէն խելացի պարոնէն իմացած էր կեսրոջն իրմէ չախորժիլը, փոխանակ անոր սիրտը չահելու համար հլուժեամբ վարուելու, հետեւեալ օրէն կ'սկսի իր օրինակը ցոյց տալ :

Երկուշաբթի առաւօտ տիկին Մ. իր խուցին մէջ կը սպասէ որ հարսը վար իջնէ եւ ձեռքը պագնէ, հարսն ալ իր խուցին մէջ կը սպասէ որ կեսուրը իրեն ոտքը

երթայ եւ բարի լոյս ըսելով ձեռքը պագնէ. այսպէս երկուքն ալ սենեակներէն դուրս չեն ելլեր մինչեւ երեկոյ եւ անշուշտ անօթի պիտի մնային, եթէ առժամանակեայ սպասուհին երկուքին կերակուրը զատ զատ չը տաներ :

Երիտասարդը իրիկուան վերագարձին ուղղակի մօրը սենեակը կ'երթայ, ուր տեսնել կը կարծէ իր սիրեցեալը, բայց մայրն առանձինն գտնելուն կը հարցնէ,

— Մայրիկ, Մ. հանըմը ո՛ւր է :

— Մինչեւ իրիկուն երեսը ո՛վ տեսաւ քի :

— Մինչեւ իրիկուն սենեակէն դուրս չելա՞ւ :

— Հապա ի՞նչ գիտցար, հոս նստողը մա՞րդ է մի ի՞նչ է, հարցնող փնտռող չկայ :

— Ուրեմն հիւանդ ըլլալու է, ըսելով կ'աճապարէ կնոջը քով երթալ :

— Սիրուն թռչնիկս, ի՞նչ ունիս արդեօք հիւանդ ես :

— Ինչո՞ւ հիւանդ պիտի ըլլամ, իշթէ ասանկ պատն երեսիս նստեր եմ :

— Ինչո՞ւ վար չես իջներ, հո՞գիս,

— Ինծի մարդու տեղ զրին տէ բերան մը հրամմէ ըսի՞ն :

— Բայց դուն օտարակա՞ն ես որ հրամմէ ըսեն, տունին հանըմը արթըն դուն ես :

— Ան քի ատանկ է նէ՛ տունին մէջ իմ ըսածս պիտի ըլլայ :

— Դուն ի՞նչ ըսիր տէ մենք չէ՛ ըսինք, խուչիկս :

— Մարդ մէյ մը վեր չելաւ տէ, ինտո՞ր ես, բան մը կ'ուզես մը պիլէ չըսաւ :

— Ան ալ քեզի սպասեր է որ վար իջնաս :

— Ձահէր անոր ոտքը պիտի երթայի :

— Աղէկ ամա, ան վարը՝ դուն վերը, խուչ ու մունջ պիտի նստի՞ք մինչեւ իրիկուն :

— Ի՞նչ ընեմ, կլոխս կարեն նէ՛ ես անոր ոտքը չեմ երթար, ապը առաջուրնէ իմ հետս զըթ է :

Խելացի պարոնը կնոջը այս խօսքին իրաւունք տալով մօրը քով կը դառնայ :

— Մայրիկ, հայտէ հարսին քովը երթանք :

— Ձահէր ես անոր ոտքը պիտի երթայի :

— Էյ նա՛սը ընենք, ան վերը նստի դուն վարը նստիս, ասանկ բան կ'ըլլա՞յ :

— Ան վար թող գայ, վայրու՛մը ինտո՞ր է, ես երլըխձի՛ եմ :

— Ոտքը պագնեմ մայրիկ, քալէ քի չարը խափանի :

— Հա՛, գիտցիր քի չարը պիտի խափանի, տահա անիկա քեզի ինչե՛ր պիտի ընէ :

— Ըսել է, քու չուզածդ ըլլալուն համար մախսուս կ'ընես կոր :

— Ես ի՞նչ ըրած ունիմ, քանի մը հողիկ հարցուր քի մե՛նծը պզտիկին ոտքը կ'երթայ մի պզտիկը մեծին :

Պարոնը նորէն կնկանը քով կ'երթայ :

— Նաֆիլէ մ'ըսեր, աշխարհք մէկդի գայ նէ ես անոր ոտքը չեմ երթար :

— Հայտէ խուչիկս, խաթրս մի կոտրեր, քուկին ալ մայրդ է :

— Մար ըլլողը մէջ մը կուգայ տէ՛ հալ խաթըը կը հարցունէ ,

— Իշթէ ան ալ կը պէքէնէ քի առաջ գուն իրեն ոտքը երթաս :

— Միսերս կտրեն նէ չեմ երթար :

— Էյ թամամ , ասոր սօնը ի՞նչ պիտի ըլլայ :

— Սօնը զատ աուն անդ ըլլանք նէ կը հանդատանք :

— Վէստէլամ . . . բայց ես կարողութիւն ունի՞մ զատ աուն անդ ըլլալու :

— Թող մարըզ զատուի :

— Տունը մօրս է , կրնամ գուրս ընել :

— Ի՞նչ ընեմ , չէ նէ թող չի կարգուէիր :

Շարաթ մը ետքը տիկին Մ . իր ասն մէկ սենեակը քաշուելով , մնացած 3 սենեկաց վարձքովը կ'ապրէր , մինչդեռ ինքնաճառան պարտնը ուրիշ ասն մը մէջ սենեակ մը վարձեր էր , ուր չէր կրնար դարձեալ հանգստութիւն վայելել կնոջ խեռ բնաւորութիւնէն , բայց իր անտանիկի վիճակին համար չէր կրնար մէկու մը տըրտընջալ :

ԳՊՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս . Հայրապետը Տաթևի վանքէն Շուշի դացեր է , եւ շատ լաւ ընդունելութիւն գտեր է : Անտի Գանձասար եւ ուրիշ տեղեր այցելով , պիտի դառնար էջմիածին՝ մեր երկու վարդապետները ձեռնադրելու :

— Ս . Պատրիարք Հայրն Երեքշաբթի օր Աւստրիոյ դեսպանատունն երթալով , ցաւակցութիւն յայտնեց դեսպան Փոն Բալիսի , էլ լիպակէթ կայսրուհոյն եղբրական մահուան առթիւ :

— Այս Երկուշաբթի օր վայելուչ փառաւորութեամբ անդի ունեցաւ Մեծ . Տօքթօր Եաղուպեան էֆէնտի մամուանութիւնն ընդ Ազնուուհի Օր . Բարազամանի :

Շաղիկ իւր սրտագին բարեմաղթութիւնները կը մատուցանէ համակրելի Տօքթօրին եւ Տիկին Եաղուպեանի :

— Պատահական թղթակից մը որ այցելեր է Կարին , գոհունակութիւն կը յայտնէ առաջն . Տեղապահ Տ . Զաւէն Մ . Վ . ի բարեռք պաշտօնավարութեան համար , գովելով անոր թէ վարչական գործունէութիւնն եւ թէ կրթական գործին յառաջացման համար ըրած ջանքերը : Տ . Զաւէն Մ . Վ . այցելեր է Կարնոյ դիւզերը , Խնուս , Դերջան , Բասենները , մօտէն ուսումնասիրելու իր ինամոց յանձնուած ժողովուրդը : Կարնոյ վարժարանաց ամբողջ ուսուցչաց թիւն է 49 եւ աշակերտաց թիւն 2000է աւելի : Քաղաքին որբանոցի չէնքն անբաւական ըլլալուն , Արմենիան Մայր վարժարանի կիցը քարուկիր ընդարձակ չէնք մը կը կառուցուի : Ստանաբոսեան վարժարանի նկատմամբ սակէ առաջ ելած աննպաստ տարածաշնութեանց պատճառները վերցուեր են ուսուցչական նոր կարգադրութեամբ :

— Ռէթէոս էֆէնտի Պերպերեան կրէկ առաւօտ եւրոպական կառախմբով մայրաքաղաքս հասաւ ժընէվէ :

— Հայ-Հռովմէականաց Պատրիարք Գեր . ՏՏ . Ազարեան շարաթէ մը ի վեր հիւանդ է ի Մեծ Կղզի , Իր հիւանդութիւն քիչ մը մտահոգութիւն կը պատճառէ : Այս պատճառու Սեպտ . 5 ին գումարելի եպիսկոպոսական Սինոդի նիստն յետաձգուած է 7 ին , եւ պիտի գումարուի ի Մեծ Կղզի :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրո-Հունգարիոյ այնքան համակրելի եւ այնքան դժբաղդ Կայսրուհի-Թագուհիին եղբրական վախճանը ի ժընէվ , անժանօթ չէ անշուշտ մեր ընթերցողներուն :

Նոր մանրամասնութիւններ . — Կայսրուհին Պօռիված օթէլէն ճամբայ ելլելէն քանի մը վայրկեան վերջը , գետին ինկաւ : Քանի մը հոգի օգնութեան հասան , սակայն մէկն ալ զանի չէր ճանչնար : Պատուակալ Կոմսուհին եւ ժընէվցի վաճառականի մը օգնութեամբ Կայսրուհին յաջողացաւ ոտք ելլել եւ շոգենաւ գնաց : Քարափ գտնուողներէն ոչ ոք եղբրական զէպքը տեսած էր , ամէն մարդ այնպէս կը կարծէր թէ կայսրուհին վրայ եկածը պարզապէս մարելիք մըն էր որ չուտով պիտի անցնէր : Շոգենաւ մտնելուն պէս Կայսրուհին աթոռակի մը վրայ նստաւ եւ անմիջապէս զգայալի եղաւ : Կայսրուհին ուշաբերելու համար եղած ջանքերը անօգուտ ըլլալով , նաւը ստիպուեցաւ նորէն ժընէվ դառնալ եւ պօռիվածի առջեւ կեցաւ : Կայսրուհին պատգարակով Օթէլ փոխադրուեցաւ ուր բժշկական փորձերը հաստատեցին թէ հոգին աւանդած էր :

— Վիէննա անցեալ կիրակի տխրութեամբ համակուած էր իր ամբողջութեանը մէջ , Հասարակայնի խըրախճանութիւնք , նուազ , երգեր դադրած էին : Ժողովուրդը վշտահար սրտաբեկ իր սիրեցեալ Կայսրուհին կ'ողբար :

— Թրիէսթ Իտալացեոց զէմ ցոյցեր կ'ըլլան , ոստիկանութիւնը բազմաթիւ ձերբակալութիւններ ըրաւ : Աւստրեան լրագիրներ ընդարձակ յօդուածներ կը գրեն ցուցնելու համար որ Իտալիա այս անցած դարձածին մէջ յանցանք չունի :

— Ժընէվցիք եւ Զուիցերիա հակառակ իրենց համակրանքին արտայայտութիւններուն ձախող զիբքի մը մէջ կը գտնուին այս պահուս , որովհետեւ եղբրական զէպքը իրենց ազատ երկրին մէջ տեղի ունեցաւ :

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Երրորդ սպագրուրեան վերապահեալ է՝ ճոխացեալ եւ կրկնապատիկ յարեցեալ , եւ զորս դու պատմիրեցերն) :

ԾԱՂԻԿԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՆԻՍԻԿ Է

Մեր գաւառացի բաժանորդներէն կը խնդրուի թերթիս բաժանորդագրութեան պայմանը նկատողութեան առնելով՝ Նոր Երջանի (ԳՊ թիւն է որ կը հրատարակուի) բաժնեգլխները անյատպաղ զրկել եւ ազդարարութեանց հարկ չթողուլ :

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ե.

ԱՊԱՐԴԻՒՆ ՊՐՈՏՈՒՄՆԵՐ

— Եհն մնաք, Աստուած մէկին տեղ հազար տայ ըսաւ աղքատը եւ աւելցուց, տիկին՛ն, ուրիշներու սու- ները յարկ յարկ վարձու տրուած ըլլալով զիս թոյլատ- րեցին որ վեր ելլեմ եւ իրենց վարձակալներէն ալ ողոր- մութիւն խնդրեմ, եթէ ձեր տունն ալ այնպէս է ան- շուշտ թոյլ պիտի տաք, բարի տիկին, որ վեր ելլելով իմ այս ցաւազին վիճակս ամօքելու համար քիչ մը բան հա- ւաքեմ :

— Այո՛, իմ տունն ալ այնպէս է, բայց վարձակալներն հիմա հոս չեն, ամէնքն ալ առաւօտուն կանուխ կը մեկ- նին, միայն երրորդ յարկի վարձակալս է որ ցերեկները երբեմն հոս կը գտնուի, այն ալ երէկ իրիկուն դնաց, մէկ մըն ալ Աստուած զիտէ երբ կուզայ, ա՛ն, ես անոնց կողմէն փոխարինեմ քեզ, ըսաւ բարեսիրտ կինը, եւ հա- նեց տասնոց մը սպրդեցուց մեր խեղճ մտ բայցիկին ձեռ- քը, որ դռնէն բաժնուելով սկսաւ իր ճամբան շարունա- կել, առանց իր շարժմանց մէջ փոփոխութիւն մը դնելու :

Այս գարշահոտ մուրացիկը քիչ մը տեղ եւս յառա- ջանալէ յետոյ, իբր թէ պատահմամբ, գնաց Գուլայի գանուած սեմին վրայ նստաւ, քիչէն տակէն աղօթքի նման բան մը մրմրալով :

— Երէկ գացեր են եւ մէկ մ'ալ չեն եկեր :

— Է՛հ, աղտոտ պապո՛ւկ, տեղ չգտար զատեցիր քովս եկար, ըսաւ Գուլա տեղէն ելլելով իբր թէ կը հայհոյէր, քիչն տակէն յարեց, կամաց կամաց մինչեւ Բերա ե՛լ, ես կը հասնիմ ետեւէդ :

Այս ըսելով Գուլա փողոցը դառնալով անյայտացաւ :

Անշուշտ ընթերցողը հասկցաւ թէ այս ծերունի մու- րացիկանը Գուլայի նորստաց բարեկամներէն մին ըլլալու էր, եւ յիշաւի ալ նոյն ինքն պարոն Օհանն էր, որ այդպէս կերպարանափոխ եղած իր մտերմին որդին գտնել կը ջանար :

Երբ Գուլա աներեւութացաւ, Պ. Օհան իր աղտոտ առպրակէն հացի մը կտոր հանելով, սովալլուկ մարդու մը նման ուտել սկսաւ, այսու հանգիւրձ միշտ գտնազան ձեւերով փողոցին տուններն աչքէ կ'անցնէր, եւ անցորդ մը իր առջեւէն անցած ատեն չէր մոռնար երբէք իր յանգերգը կրկնել «ողորմութիւն մը տուէք, խեղճ ան- կար աղքատիս» : Եւ այս տեւեց մինչեւ որ շողեմաւին մէջ տեսած ոսկի կոթով գաւազան եւ մութ կապոյտ գոյնով ակնոց ունեցող վայելչաղէմ պարոնը փողոցին Ղալաթիոյ կողմէն երևեցաւ : Իր ձեւերը ճշմարիտ յափ- րացածի մը երեւոյթը կուտային իրեն, իր թոյլ քայլերը եւ անփոյթ նայուածքը գործ ու շտապ շունեցող մարդ մը կը մատնէին : Այդ պարոնը որ նոյն ինքն Սուչօ

Կիրգան էր յոյժօրէն յառաջացաւ մինչեւ փողոցին միւս ծայրը, եւ հոն մուրացիկին ձայնն առնելով կեցաւ եւ գրպանէն մանր զրամ մը հանելով անոր տուաւ :

— Ո՛ւր տեղացի ես, խեղճ մարդ, հարցուց անոր բարձր ձայնով :

— Տիարպէքիրցի եմ, պարոն, պատասխանեց Պ. Օ- հան նոյնպէս բարձր ձայնով մը, եւ ապա իբր թէ իր աղօթքը շարունակելով ցած ձայնով յարեց, երէկ իրի- կուն գացեր եւ մէկ մըն ալ չեն եկեր : Գուլան Բերայի շիտակ ճամբուն վրայ մեզ պիտի գտնէ :

Բայց Սուչօ Կիրգա աղքատին առջեւ կեցած չըլլա- լու համար ճամբայ առած էր, առանց սակայն բառ մը կորսնցնելու անոր վերջին խօսքերէն :

Պ. Օհան՝ ճշմարիտ աղքատէ մը աւելի ախորժակով իր հացին շերան աւարտելէ յետոյ, սկսաւ դարձեալ դէպ ի Բերա շարունակել իւր խարխալուն գնացքը, միշտ անտնալով եւ գոգցես աւելի ետ մնալ փոփաքելով քան թէ յառաջ անցնելով :

Իսկ Պ. Սուչօ Կիրգա նոյնպէս յոյժօրէն մինչեւ Բե- րայի մեծ պողոտային վրայ Լիւքսէմպուրկի սրճարանը գնաց եւ ներս մտնելով ձախակողմեան անկիւնը բազ- մեցաւ եւ սկսաւ ուշի ուշով անցորդները զիտել, պա- տահմամբ ձեռք առած լրագիր մը կարդալ ձեւացնելով :

Կէս ժամ հազիւ թէ անցած էր, երբ Պ. Օհան Լիւք- սէմպուրկի պատերուն քսքսուելով անցաւ, միշտ կրկնե- լով իր սովորական յանգերգը, «ողորմութիւն մը տուէ՛ք, ողորմութիւն մը անկար աղքատիս» եւ գնաց Աղաճամիի անկիւնն սպասեց անպուլ, անպար անցորդներուն ուղ- զելով իր յանգերգը : Այսպէս գրեթէ ժամ մը անցաւ եւ մեր երկու բարեկամներն իրենց զիրքը չփոխելու դատա- պարտուած էին, սպասելով Գուլայի, որ սակայն կուշա- նար գալու :

Պ. Օհան իր ներքին շտապէն զրդուած, աւելի շուտ շուտ եւ բարձրաձայն կը կրկնէր իր յանգերգը, մինչդեռ Սուչօ Կիրգա գարեջուրի գաւաթներն իրարու վրայ կը պարպէր իր նշան իր սրանեղութեան :

Վերջապէս երկար ատենէ վերջ Գուլա երևեցաւ, որ թէպէտ յարտաքուտ ապուշի մը տարաւամ եւ անկանոն քալուածքն ունէր, բայց իրակամապէս կը վագէր, այն- պէս որ չնչասպառ վիճակի մը մէջ կը գտնուէր երբ Լիւքսէմպուրկի սրճարանին առջեւ հասաւ : Հոն իր ա- պուշի դիքքին մէջ կենալով քիչ մը ներս նայելէ յետոյ արագ ակնարկով մը գուրս հրաւիրեց Սուչօ Կիր- գան եւ ինքն ալ գնաց Պ. Օհանի քով եւ իր ներկի տու- փը վար առնելով, գոչեց :

— Չազի՛ր ծերուկ, տեղ չես դտեր այս մեր տեղը կեցեր ես, կորի՛ր հոսկէ որ մենք ալ քանի մը կուտ պիտի շահինք, ի՞նչ պիտի ընենք, հասկնանք :

— Տղա՛ս, ինչո՞ւ ատանկ կը յանդիմանես զիս, քու ձայնէդ կը հասկնամ թէ երիտասարդ ես, դեռ մինչեւ ի- րիկուն օր կայ, հարկաւ օրականդ կ'ելլէ, թող որ ես ալ քանի մը փարա առնեմ եւ իրիկուան անօթի չը մնամ :

Շարունակելի

(Հաստատեալ յամին 1852)

ՏՐՔ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ ԱՍԵՐԻԿԵԱՆ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

Թիւ 396, Մեծ-Փողոց Բերս

(Եանիի Գարեջրասան վրայի յարկը, նիւղ Չրպուհեանց ղէմ)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենասատիկ ցաւած ակոսներն մեկ անգամեւ կը լեցուին, ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ :

Նորահար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական ակոսներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դեմիսի ձեւաւորութիւն ըստ սարիսի, ծամողութիւն, եւ ազատ արտաւանդութիւն երաշխաւորեալ :

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին, ինչպէս նաեւ թմրեցուցիչ զեղբրու, եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ անոսնց ցարի ասամեանաւորութիւն :

Յ. Գ. Ձմեռները կիրակի օրերն ալ, (մինչեւ կէս օր), ինչպէս նաեւ ամեն օր, (մինչեւ կէս գիշեր) հիւանդ կ'ընդունին Բերայի գործատեղին :

ՊՆԱԿ ԿԱՄ ԱՅԲԲԷՆԱՐԱՆ

Հայերէն գրերն հսկայ մեծութեամբ տպուած են լաւ թղթի վրայ, քերականէ առաջ գործածելի, մանկապարտէզներու՝ նոյն իսկ տան մէջ՝ ուր մանուկն սկսած է խօսիլ : Մեծ պակաս մը կը ընու իւր զանազան ձեւի սակ գործածելու յարմարութեամբը, այնպէս որ կարելի է պատի, տախտակի կամ խորանարդ փայտերու վրայ փակցնել եւ կամ մկրատելով իրարու յօղել եւ կազմել վանկ, բառ եւն :

- Ա. Պնակ. բողբոջիք եւ թուանշանք (գրերուն մեծութիւնն է 5 1/2 սանթիմ) Գին 1 Ղր.
- Բ. Պնակ. գլխագիր եւ կէտեր 1 Ղր.

ԳՐԱՑԱՆԿ

ՊԱՂՏԱՏԻԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Գին 2 Ղր.

Բացի սոյն գրատան գրքերէն որոց իւրաքանչիւրին համար մասնաւոր ծանօթութիւններ զրած են, կը պարունակէ նաեւ այլ եւ այլ կարեւոր հրատարակութիւններ ինչպէս թղթատարութեան վերաբերեալ կարեւոր գիտելիք եւ սակացոյց : Դրոշմաթղթի կանոնագիր եւ սակագին եւն. եւն :

ԷՔԻԹԱՊԼ
 (ՄԱՅՅԱՆ ԱՄԱՆԵՐԱՅ)
ԱՇԽԱՏԱՆ ԷՆ ՀԶՕԸ
 Կենաց Ապահովագրական ընկերութիւն
 Երաշխատորութեամբ Կրասնագրուիսն Է
 1 ՄԵԼԵՄԻ 227 ՄԵԼԵՄԻ ՑԵՄԷ
 Ներկայացուցիչ Կ. Պոլսոյ
 ԳԱՌՆԱՆ ԱՄՏՈՒՄԱՆՏՈՒՐ

Ա Ձ Դ



Ազգ. Հիւանդանոցի սեպհական մաքառա զերձաններն ըստ առաջնոյն կը վաճառուին Սուլթան համամ Մարտիկ էֆէնտի Շիրինեանի վաճառատունը, կեդրոնատեղի Ազգ. Հիւանդանոցին սիկառի թղթին :

Այս առթիւ կը խնդրուի Արգոյ հասարակութեանն որ փութեան փորձել այս զերձաններն Փորձառու եւ մասնագէտ անձինք հաստատած են առաւելութիւնը հրապարակի վրայ գտնուած առաջնակարգ զերձաններէն :

Փորձեցէք եւ անմիջապէս պիտի տեսնէք առաւելութիւնը :

Եւ միանգամայն օգնած պիտի լինիք Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի հարիւրաւոր խեղճ եւ օնկար պատրաստարեւոյց :

Գրատուն Գ. ՊԱՂՏԱՏԻԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Սուլթան Համամ ձատտիսի, Թիւ 14

Արսօնաշէր Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Վ. ՄԻՆԱՍՅԱՆ

Կ. Պոլս, Սուլթան Համամ 14.